


Մրցունակություն [1]



Ներկայիս անորոշ և հեղիեղուկ միջավայրերում բազմաթիվ երկրներ մրցակցային առավելությունների վրա հիմնված կայուն աճի խթանման նոր աղբյուրների փնտրտուքների փուլում են գտնվում: Տնտեսական հենքը կարող է փոխվել միայն գրագետ ձևակերպված, իրատեսական և բոլորի կողմից ընդունելի տեսլականի և ռազմավարության մշակման միջոցով: Տեսլականն ու ռազմավարությունը ոչ միայն գործնական ու իրագործելի պետք է լինեն, այլև՝ իրենց առջև մեծ նպատակներ դնող. մրցունակության պայքարում անհնար է հաղթել առանց նման ձգտումների: Այս զարգացումներն իրական, ռազմավարական ճեղքումի անհրաժեշտություն են ստեղծում, ինչը որոշում կայացնողների առջև բարձրացնում է երկու հիմնարար հարց.

1. Ո՞րն է իրենց երկրի դերակատարումը տարածաշրջանային և համաշխարհային տնտեսության մեջ:
2. Ինչպե՞ս կարելի է հասնել այդ դերի պատշաճ մակարդակով կատարմանը:

Կայուն մակրոտնտեսական քաղաքականությունը և զարգացած ենթակառուցվածքը տնտեսական զարգացման համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են մրցունակության իրականացման համար: Այս պայմաններում ռազմավարական ճեղքումի անհրաժեշտությունն առաջանում է իրականացման համար:

Visit also:



Source URL: <http://ev.am/hy/brainwork/competitiveness-insights>

Links



[1] <http://ev.am/hy/brainwork/competitiveness-insights>